ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ։

«Մշակի» 62 №ում կարդացինք Ց. Մ. սուորագրութեամբ նորից մի զրախօսութիւն, որ կրկնութիւն է ոչ միայն միեւնոյն գործի, այլ միեւնոյն բառերի եւ խօսքերի։ Խնդիրը դարձեալ Ալաշկերտցիների համար ժողովված գումարն է։ Ցաւալի է, որ մեր մէջ լուսաւորված եւ աղգի ցաւերին ցաւակից ձեւանալու համար բաւական է Էջմիածնի դէմ քանի մի հայհոյական խօսքեր արտասանել, եւ ահա իւրաքանչիւր իմաստակգրողը, որտեղից որ լինի, իւր գրածին իբր աւելի աղ տալու համար եւ իւր անձն բանիմաց եւ կարեկցող ցոյց տալու համար, պիտի անշուշտ քանի մի հայհոյական խօսքեր շարէ Էջմիածնի դէմ, իսկ աւելի համբաւը վաստակելու համար՝ միամիտների առաջ, սուտ նիւթ հնարէ եւ խօսէ նորա վերայ, ինչպէս ահա Ց. Մ.։

«Արարատի» հոկտեմբեր ամսի №ում հրատարակվեցաւ Ս. Էջմիածնի Սինոդի 1879 թ. օգոստոսի 22ի օրագրութիւնը, որով Վեհ. Կաթողիկոսի տնօրինութեամբ գաղթականների անունով ժողովված 16,358 մ. գումարը (եւ ոչ 17,000, ինչպէս որ սխալ կհրատարակէ աւելորդութեամբ Ց. Մ.) ուղարկված է Պետերբուրգ Զէմսկայա Տամբովսկայա երկաթուղու արժէքները գնելու համար յանուն Իւչ քիլիսէի Ս. Յովհաննէսի վանքի դպրոցի, որոնց տոկոսիքը պիտի գործ դնվին նոյն դպրոցի վերայ, աւելացած դրամով օգնելով Հին Բայազէդի կամ Թոփրակ—քալէի դպրոցներին։ Յառաջագոյն եւս հրատարակված էր արդէն, որ դեռ անցած ամառն Վեհ. Տէրը կանչեց Ալաշկերտցիների առաջնորդին եւ պատուիրեց նորան թէ փողը պիտի գործ դրվի Ալաշկերտցիների համար դպրոց շինելու եւ պահելու, որովհետեւ նոցա անունով է ժողովված եւ ուրիշ որեւիցէ նպատակով գործ դնել նոյն գումարը Վեհ. Տէրը կհամարէ ընդդէմ Աստուծու, խղճի եւ նուիրողների։ Նոյնը ասաց Վեհ. Տէրը դպրոցասիրաց ընկերութեան կողմից եկած պ. Շահնազարեանին անցած ամառն, եւ նոյն գումարի տոկոսիքների կարգադրութիւնն ըստ ամենայնի յանձնված է Արեւելեան դպրոցասիրաց ընկերութեան վարչութեանը եւ Ալաշկերտցիների առաջնորդին։ Այնուհետեւ Վեհ. Հայրապետի այսպիսի տնօրինութենից յետոյ, որ եղած է ինն ամիս առաջ, ի՞նչ նշանակութիւն ունի հրատարակել թէ Ալաշկերտցիները փողերը փակած պահված են Էջմիածնում։ Ո՞ր օրի համար, ի՞նչ նպատակով,—յայտնի չէ»։

Սա ժողովրդի բարեկամ լինել կնշանակէ՞ թէ ժողովրդի

թշնամի լինել, հաղորդելով նորան սուտ տեղեկութիւններ, գայթակղեցնելով եւ մոլորեցնելով նորան, անձնական կիրքերի գործիք շինելով նորան։

Վ.եհ. Կաթողիկոսի այսպիսի տնօրինութենից յետոյ, երբ փոքի կարգադրութիւնը Արեւելեան գպրոցասիրաց ընկերութեան եւ Ալաշկերտի առաջնորդին է յանձնված, ի՞նչ կնշանակեն «Արքեպան և արքեպանագոյ հայրեր, գոնէ ոչ թող լեռնը, լեռնոյ յեր դպրոցը, ոչ ալ ալեռները ոչ ոչ» անտեղի եւ նենգամիտ խօսքերը, եթէ ոչ անվայել միջոցով իւրեան կարեկցող անձն ձեւացնել, խաբել խեղճ ժողովուրդը, փորձանքի մէջ ձգել նորան եւ միանգամայն ծաղրել նորա բանականութիւնը։ Եթէ ուրիշ անյայտ նպատակ ունի Ց. Մ. կամ նորա նմանները, թող յայտնի ասէ, ապա թէ ոչ—Վ.եհ. Կաթողիկոսի այսպիսի օգտաւէտ, հաստատահիմն եւ նպատակայարմար տնօրէնութենից յետոյ յիշված գումարի մասին, որից գոհ պիտի լինին թէ նուիրողները, թէ նոքա որոնց համար նուէրներ եղած են եւ թէ ժողովրդի ներկայի եւ ապագայի մասին լրջմիտ մտածողները, առանց կամենալու ամենեւին ուշք դարձնել Սինոդի օրագրութեամբ հրատարակված ճիշդ տեղեկութիւններին, ի՞նչ կնշանակէ յանդգնել եւ հարցնել թէ «ի՞նչ արեց էջմիածինը»։

Սա միեւնոյն է, ինչ որ Պիղատոսը «Ի՞նչ է ճշմարտութիւնը» հարցը մեր Տէր եւ Փրկիչ Յիսուսին ասելուց յետոյ, չկամեցաւ նորանից պատասխան իմանալ եւ դուրս գնաց։

Երբ սովի ձայնը ստուգվեցաւ, Վ.եհ. Հայրապետի տնօրինութեամբ Սինոդը զանազան վիճակներ պատուէրներ ուղարկեց նուէրներ ժողովելու յօգուտ սովատանջ Հայերի եւ շուտ հասցնելու կամ Էջմիածինկամ Վ.ան յանձնաժողովին։ Այստեղ եւս տնօրինված է եկած գումարներն անմիջապէս հասցնել սովեալների համար Կ. պոլսում սահմանված Յանձնաժողովին Կիւլպէկեան վաճառական ասն միջոցով Թիֆլիսում։ Արդ Վ.եհ. Հայրապետի այսպիսի տնօրինութենից յետոյ, հրատարակել թէ «Վ գէրե ի՛նչ վիճակին պիտի հանդիպին սովեալների անուանով հաւաքված գումարները եւ ամեն տեղ նուիրատու անձներին մոլորեցնել եւ կասկածի մէջ ձգել, եւ նուիրողների սիրտը կոտրել, այսպիսի վարմունքը յօգուտ սոված եղբայրների խօսել եւ նոցա օգնութեան ձեռը մեկնել կնշանակէ՞ թէ ի վնաս սոված-ների խօսել եւ նոցա սոված զաւակներին սովից սպանելուն նպաստել, սովից մեռնող մանուկներից քանի մի կտոր հաց խլել կնշանակէ՞։ Թող մտածէ Ց. Մ...